ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ 2018 ԲՅՈՒՋԵ

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Սիրելի՛ երևանցիներ

Արդեն հինգերորդ տարին անընդմեջ Ձեզ է ներկայացվում Երևան քաղաքի տարեկան բյուջեի ամփոփ ցուցանիշների գրքույկը: Երևանի 2018 թվականի բյուջեն մշակվել է՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի զարգացման 2018-2022 թվականների հնգամյա ծրագրով նախատեսված գերակայություններն ու առկա ռեսուրսները և 2018 թվականի տարեկան ծրագրի առաջնահերթությունները, 2017 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հիմնական ուղղություններն ու դրանց կատարման արդյունավետությունը: Տարին հոբելյանական է մեր մայրաքաղաքի համար, և 2800-ամյա Երևանի տարեկան բյուջեն ներառել է նաև տարվա ընթացքում անցկացվող հոբելյանական միջոցառումների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ որոշակի ծախսեր:

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի նախագիծն անցել է հանրային և հրապարակային քննարկման բոլոր փուլերով, միաժամանակ նախագիծը տեղադրվել է << արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական http://www.e-draft.am կայքում, ինչպես նաև՝ Երևան քաղաքի պաշտոնական կայքում: Քննարկումների փուլերում ներկայացված բոլոր հիմնավոր և իրագործելի առաջարկներն ընդունվել են: Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեն հաստատվել է Երևանի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 26-ի նիստում:

2018 թվականը հանդիսանում է Երևանի զարգացման հնգամյա ծրագրի մեկնակետը և այդ առումով ընթացիկ տարվա համար նախանշված նոր և շարունակական ծրագրերը միտված են ապահովելու բնակչության կենսական շահերի պահպանման առաջնահերթությունները, մայրաքաղաքի տարածքային համաչափ և կայուն զարգացումը, բարեկարգ, հարմարավետ և մատչելի միջավայրի ձևավորման շարունակականությունը, քաղաքային ենթակառուցվածքների արդիականացումն ու բարեփոխումը:

Երևանի քաղաքապետարան

Բյուջե 2018

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեն քաղաքի եկամուտների ձևավորման և ծախսման մեկ տարվա ֆինանսական ծրագիրն է, որը նախատեսված է Երևանի զարգացման հնգամյա և տարեկան ծրագրերի, ավագանու և քաղաքապետի լիազորությունների իրականացման համար: Այն տարվա կտրվածքով մուտք գործող եկամուտների և իրականացվող ծախսերի փաստաթղթային արտացոլումն է:

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջե (հազ.դրամ)



Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի եկամտի աղբյուրները

Քաղաքի եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրներն են՝

- Հարկային եկամուտները և տուրքերը (գույքահարկ, հողի հարկ, տեղական տուրքեր) ՝ 14.4 մլրդ դրամ
- Պաշտոնական դրամաշնորհները (դոտացիա, սուբվենցիա (նպատակային ֆինանսավորում))՝ 21.7 մլրդ դրամ
- Այլ եկամուտները (պատվիրակված լիազորություններ, հողերի վարձավճարներ, շահաբաժիններ, տեղական վճարներ և այլն)՝ 44.1 մլրդ դրամ



Երևանի բյուջեն՝ եկամտային (մուտքային) մասով, ձևավորվում է տարբեր աղբյուրներից, ինչպես նաև ի հաշիվ յուրաքանչյուր բնակչի իրականացրած պարտավորությունների, որոնք կատարվում են հարկերի, տեղական տուրքերի և վճարների ձևով: Մասնավորապես, հողի հարկի գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների մուտքերի արդյունավետությունն ուղղակիորեն կախված է մեր բնակչի, գործարարի, տնտեսվարող սուբյեկտի պարտաճանաչության աստիճանից և գիտակցումից, որ Երևանի բյուջե ցանկացած եկամտային մուտք, իր տեսանելի լուման ունի քաղաքի պահպանման ու զարգացման բազմաբնույթ ծրագրերում:

Հիմնական ծախսերն ըստ գործառնական դասակարգման

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի ծախսերն ուղղված են ապահովելու քաղաքի ընթացիկ գործունեությունն ու զարգացումը: Իրականացվող ծրագրերը համահունչ են մայրաքաղաքի հնգամյա և տարեկան ծրագրերին: Ընտրված գերակայությունների համատեքստում իրականացվող շարունակական և նոր ծրագրերը միտված են Քաղաքի կայուն և համաչափ զարգացմանը: Լայնածավալ աշխատանքներ են իրականացվելու ճանապարհաշինական ոլորտում, հասարակական տրանսպորտի բարեփոխումների և քաղաքային լուսավորության արդիականացման ուղղությամբ, նոր աղբավայրի կառուցման և հնի մեկուսացման ծրագրով, կրկնապատկվել են նախադպրոցական ուսումնական հաստատությունների հիմնանորգման ծախսերը, շարունակվելու են բազմաբնակարան շենքերի մուտքերի և տանիքների, այգիների, բակային տարածքների, խաղահրապարակների նորոգման ծրագրերը, մինի ֆուտբոլի դաշտերի և թեքահարթակների կառուցման, ինչպես նաև՝ մատչելի միջավայրի ձևավորմանը նպաստող ծրագրերը: Բյուջեի ծախսային մասում մեծ մասնաբաժին են կազմում նախադպրոցական, հանրակրթական և արտադպրոցական կազմակերպությունների պահպանման ծախսերը: Շարունակվելու են ֆինանսավորվել նաև առողջապահական, սոցիալական և մշակութային բազմաբնույթ ծրագրերը:



Վարչական շրջանների ծախսերը 2018 թվականին

Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեի ծախսային ուղղությունները համահունչ են քաղաքի համաչափ զարգացման սկզբունքին և իրականացվում են այդ սկզբունքի արդյունավետության ապահովման նպատակով: Այդ առումով ծախսային ուղղությունները բաշխվում են վարչական շրջանների միջև՝ բնակչության թվաքանակի, զբաղեցրած տարածքի, աշխարհագրական դիրքի և այլ գործոնների մեկ ամբողջական միավորի համատեքստում: Վարչական շրջանների մասով ստորև ներկայացված ցուցանիշներն ընդամենը հանդիսանում են Երևան քաղաքի 2018 թվականի բյուջեով նախատեսված առանձնացված ծախսեր: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ Երևանի քաղաքապետարանի մասով նախատեսված մնացած ծախսերը նույնպես իրականացվում են վարչական շրջաններում՝ ապահովելով և պահպանելով իրականացվող ծրագրերի համաչափ բաշխման գերակա սկզբունքը:



Շարունակական, ավարտվող և նոր ծրագրեր

Շրջանցիկ ճանապարհի ծրագրի իրականացում Արգավանդ-Շիրակ, Դավթաշեն-Աշտարակ, Բաբաջանյան-Աշտարակ ճանապարհահատվածներում

Երևանի հիմնադրման 2800-ամյակին նվիրված այգու վերակառուցում

Թվով 2 տրանսպորտային հանգույցների («Հայրենիք» կինոթատրոնի խաչմերուկ Աշխատանքի հրապարակ) շինարարական աշխատանքների մեկնարկ

Շուրջ 120 թեքահարթակների կառուցում՝ դրանց հարակից մայթերին թույլ տեսողություն ունեցող քաղաքացիների համար նախատեսված հատուկ սալիկների տեղադրմամբ

Թվով 5 հանգստի գոտիների բարեկարգում և 6 մինի ֆուտբոլի դաշտերի կառուցում

Երևանի ենթակայության 39 մանկապարտեզների հիմնանորոգում և 15 պոլիկլինիկաների տանիքների վերանորոգում

Բաղմաբնակարան շենքերի շուրջ 1615 շքամուտքի, շուրջ 81000քմ հարթ և 43000քմ թեք տանիքների վերանորոգում

Երևան քաղաքում նոր աղբավայրի կառուցման և հին աղբավայրի մեկուսացման ծրագրի գործնական աշխատանքների մեկնարկ

Երևան քաղաքի թվով 28 փողոցների լուսավորության համակարգերի արդիականացման աշխատանքների գործնական մեկնարկ

Նոր ոռոգման ցանցի ստեղծում Մոսկովյան և Շիրակի փողոցներում:

Երևանի կենդանաբանական այգում առյուծների, արջերի և գայլերի համար միջազգային չափորոշիչներին համապատասխան նոր աղատավանդակների, ինչպես նաև՝ կենդանիների կարանտինի կառուցման ավարտ

Մանկապարտեզների և շախմատի դպրոցների աշխատակիցներին առողջապահական փաթեթի տրամադրում

Երևանաբնակ շուրջ 3000 ծնողների համար ՀՀ և Լեռնային Ղարաբաղի հանրապետության սահմանամերձ ղորամասեր այցելության կազմակերպում

Սոցիալապես անապահով բազմազավակ ընտանիքների շուրջ 1200 երեխաների ամառային հանգստի կազմակերպում Ծաղկաձորի, Հանքավանի և այլ մանկական ճամբարներում

«Էրեբունի Երևան 2800» տոնակատարությունների շրջանակում Երևան քաղաքում բազմաբովանդակ մշակութային, կրթական-ճանաչողական, գիտական ծրագրերի և միջոցառումների և տոնական հանդիսավոր համերգաշարերի կազմակերպում

Հիմնական գերակայությունները
2018

Երևանի տարածքային համաչափ և կայուն զարգացման ապահովումը

Երևանի կենտրոնի բեռնաթափման և քաղաքը շրջանցող ճանապարհների ճանապարհաշինարարական ծրագրերի շարունակականության ապահովումը

Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգային բարեփոխմանը միտված ծրագրի գործնական փուլի մեկնարկը

Փողոցային լուսավորության համակարգի արդիականացման աշխատանքների գործնական փուլի մեկնարկը

Ժամանակակից նոր աղբավայրի կառուցման և հին աղբավայրի մեկուսացման ծրագրերի իրականացման գործնական փուլի մեկնարկը

Վերելակային տնտեսության արդիականացման ծրագրի իրագործելիության ուսումնասիրման և նախապատրաստական աշխատանքների կազմակերպման ապահովումը

Բակային տարածքների բարեկարգման և բնակչության անվտանգ տեղաշարժի ծրագրերի շարունակականության ապահովումը

Բնակելի ֆոնդի վերանորոգման և պահպանման, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման ծրագրերի շարունակականության ապահովումը

Հբոսաշրջության զարգացմանը խթանող քաղաքականության իրականացման շարունակականության ապահովումը

Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ինչպես նաև՝ այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիության ապահովումը, քաղաքային առօրյան ավելի մատչելի դարձնելու մարդասիրական ծրագրերի շարունակական և հետևողական իրագործումը

Մայրաքաղաքի բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավմանը միտված ծրագրերի շարունակականության ապահովումը

Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության արդեն իսկ ձևավորված ավանդույթների պահպանումն ու զարգացումը

Միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացմանը միտված ծրագրի իրագործելիության ուսումնասիրման աշխատանքների համար նախադրյալների ստեղծումը

Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը

Մշակութային ժառանգության պահպանությունը, առողջ ապրելակերպի խրախուսումը

Առողջապահության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացումը և բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակական բարելավումը

ԵՐԵՎԱՆ

2800

ք. Երևան, Արգիշտիի 1
www.yerevan.am
/+374 11/ 514 - 370
/+374 11/ 514 - 209

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» ՍՊԸ տպագրատանը, տպաքանակը՝ 2000 օրինակ